



175. ԿՏՐԻՉ ՏՂԱՆ

Ունում ա, ունում չի մըն թաքավեր ա ունում, աստոծ վեքին լուսավերի էտ թաքավերիտ քուստուն տղա յա ունում, աստոծ ընդանց վեքին լուսավերի էտ քուստուն ախպորցը կուճինի անումը Կտրիչ ա ունում, աստոծ ընդա վեքին էլ լուսավերի Կտրիչը մըն ածղահա մառթ ա ունում, ամեն կոռնը մըն կյերան, կյնիւտիւր մեծ, կյեղեցիկ:

Կտրիչը հրըվըններին խուխորցը նհետ խաղ ընելիս տամ ա մըն պուավի տղի կյնիւտի պուկում: Պառավը կյամ ա լանց ը շիվան անում, թա կյնիւտիս վեղեմ, քու ըրեսնուինը ախպերքը քյացալ են իւրանց հետի կնեկյ ճարեն, պիրեն, տնլ էլ եկալ ես խուխորցը ըսպանում: Կտրիչն ասում ա.—Ա՛յ նանի, ես դյուղում չեմ, բա հո՞ւնց քյինամ ինձ հետի կնեկյ պիրեմ: Պառավն ասալ ա.—Չոռը ցավ քյինաս, քյինա քու մոր ասի, թող քու հորտ ասի, հորտ ծին նիհ իլ, քյինա քղհետի դոշիություն ըրա, կնեկյ պեր: Կտրիչը քյնում ա մորն ասում, մերն էլ մարթին ա ասում: Թաքավերն ասում ա.—Թող քյինա, իմ իլխիս հենե, մըն ծի եր օնի, նիհ ինի քյինա: Մերը կյամ ա ասում.—Կտրիչ, քու հեր ասում ա. «Քյինա իմ իլխաս մըն ծի եր կալ, քյինա՞: Կտրիչն ասում ա.—Չէ՛, ես իմ հոր ծին պետմա նստեմ: Միյին անումը լսած ա ունում, տեսած չի ունում: Մերը մարթին ասում ա.—Կտրիչը քու ծիտ ա օղում: Թաքավերն ասում ա.—Վեր օղում ա, թող նիհ ինի, քյինա:

Կտրիլը հորը ծին նիհ ա ինում քյոննում, մըն ըրկաթի շամ-
փուր մեշկան կախ: Պրոաւին տանը կոխկաւը քյիննլիս, պա-
ռաւն ասում ա.—Շո՞ր ես քյոննում, Կտրիլ: Կտրիլն ասում ա.—
Քյոննում եմ ինձ հետի կնեկյ պիրիմ: Պառաւն ասում ա.—Վեղս
կլխիտ, էտ ընշոտած շամփուրաւտ ե՞ս քյոննում կնեկյ պիրեա:
Կտրիլն ասում ա.—Բա հի՞նչ անեմ: Պառաւն ասում ա.—Քյինա
քու հոր թոր-ասպարը կապի, քյինն: Ասում ա.—Շո՞ր ա իմ հոր
թոր-ասպարը Ասում ա.—Հենա քու մոր առին, քյինն ինք կալ,
քյինա: Կտրիլը կյամ ա մորն ասում.—Ա՛ մեր, պեր իմ հոր թոր-
ասպարը: Մերն ասում ա.—Ա՛յ վերթի, հո՛ւնց պիրեմ, վեր քու
հեր գլիդա, կյոնլոխտ կկտրի, ախր: Էն քու խորթ հերտ ա, քու
հալալ հերտ շոնտի յա մեռալ, էն թոր-ասպարն էլ քու հալալ հորտ
ա: Կտրիլը քյոննում ա խորթ հորն ասում.—Բաքաւեր, պեր իմ
հոր թոր-ասպարը, քյոննում եմ ինձ հետի կնեկյ պիրեմ: Բաքա-
ւերն ասում ա.—Ք...տ կեր, շան տղա, թոր-ասպարը չեմ տալ: Կըտ-
րիլը վեր մըն հետ բղավում ա, սարում-ծորում հինչքան հեյվան-
գազան կա, չիմ տոնս են տննում սրտաճաք իլած փախնում՝ էն-
քան զոռի յա ոնում Կտրիլին սնսւր: Ետ Կտրիլը ծեռքը քյոնցում
ա մըն շինարի ծառ պուկում, վեր տա թաքաւերին ըսպանի.—
Բաքաւեր, հորս թոր-ասպարը տու, թաշնա կսպանեմ: Բաքաւերը
վրիսիլան ասում ա.—Հենէ ընդեղ, քյինն եր կալ, թաքյ ինձ
ըսպանես վեշ:

Կտրիլը հորը թոր-ասպարը կապում ա, քյոննում: Պառաւին
տանը տակաւն անց կնալիս, պառաւն ասում ա.—Մըհեկ վեր
հորտ տղան ես, քյինն, ամմա վեր քու ըրեսնուինը խորթ ախ-
պորցդ պտահես, մըտեղ քոն լինես, միշտ հեռու քոն կինես:

Եր ա կենում, քյոննում: Շատ ա քյոննում, քիշ, հըսնում ա
ուրան ախպորցը: Ըրեսնուինը ախպերքն ասում են.—Շո՞ր ես
եկալ: Ասում ա.—Եկալ եմ ինձ հետի կնեկյ օղեմ: Ասում են.—
Հայ, հա՛յ, հես ա իրեք տարի յա մենք կնգան ենք ման կյամ,
հարում չենք, տո՛ւ ես ճրիլու: Ետ ասում են.—Մեր հերը ուրան
ծին, թոր-ասպարը մեղ տուլալ չի, էտ հունց ա՛, վեր տուլալ ա
ըստան՝ մեր խորթ ախպորը:

Բաքաւերը մըն արար ա դարկում, թա քյինն իմ ըրեսնուինը
տղորցս ասի, թող Կտրիլին ըշտեղ վեր ա, ըսպանեն: Արարը կյամ
ա թաքաւերին ըրեսնուինը տղորցն ասում, թա.—Կտրիլին ըսպը-
նեցեք:

Քիշերը չիմութը մըն ծորում են եր կյամ, ամմա Կտրիլը պը-
ռաւին ըսածին գլորա, ըտանց նհետ քոն չի ոնում, քյոննում ա

մըն սարի կշռելոս պիցրանում, քոն ինի Ըրեսնուինը ախպերքը Արաբին դարկում են, թա քիննա Կտրիչին քթակերը քոն տեղը չար ածի, թող մեռնի Կտրիչը քոն չի ձնում։ Մըն վախտ տեսնում ա մընը կշռողը կշռող մտառանում ա ձերան, վեր ասում ա.— էյ, տու հու վե՛ս, արարը փախնում ա։ Մըն քար ա լիբա անում, արարը փախնում ա։ Կտրիչը ենդան քյոնում ա, տեսնում ա մըն պերթ, պերթին տիւանը մըն դե, ասում ա.— Իմ վերսս փախաւ՝ քու պերթտ մտաւ, ինձ տու Դեն ասում ա.— Տալ չեմ, եկ կռվենք։ Կռվում են, Կտրիչը դեին ըսպանում ա, տեսնում դե չի, մըն ջադու պառաւ ա դեի խորիսա կլեցած, շիբան ըրեսնուինը պիլանի յա տուս օնում, ըրեսնուինը օթաղ պանում, տեսնում աման ութադում մըն ախճիկ։ Չիմին մըտանիքը մընդրեհրան տոն ա օնում, պերթան տոն կլամ, քյոնում ախպորքը կոխկը, տեսնում քոն իլած են, ընդանց մտանքը մընդրեհրան տոն ա օնում, ըխճկորքը մտանիքը քաղում, ետ կլամ ըխճկորքը տամ ձերան խորթ ախպորքը մտանիքը, թա.— Հենե՛, իմ ըրեսնուինը ախպերքը, քաջեք ընդանց կոխկը, հոն մտանի վեր հոն առի ինի, ընդա կրենկլը կտաննաք։

Ինքը ծին նիհ ա ձնում, քյոնում։ Քյոնում ա վեր դիբա ձերան հայրենիքը քիննա, տեսնում ա մըն դե Դեը ըրեսնուինը ախպորքը պան ա թողում, Կտրիչին պան չի թողում, ասում ա.— Ետ տառ, կքիննա հաթուն հանում ըխճկանը ինձ հետի կպիրե՛ս, կթողամ քիննա քու հայրենիքը, պիրիլ չես, թողալ չեմ։

Կտրիչը ետ ա տառնում, քյոնում։ Քյոնում ա, քյոնում, շատընը քիլը աստոծ պիդա, հըսեում ա մըն ծովի, տեսնում ա էտ ծովիտ կոխկին մըն հիլիվեր կաղնած։ Հիլիվերը Կտրիչին ասում ա.— Հո՛ր ես քյոնում։ Ասում ա.— Քյոնում եմ հաթուն հանումին պիրեմ։ Ասում ա.— Հո՛ւ հետի։ Ասում ա.— Սե դեին հետի։ Ասում ա.— Ես էլ եմ եկալ, վեր հաթուն հանումին տանեմ, կրացալ չեմ, հիլիվիրալ եմ, մըհեկլ էլ տու ես քյոնում, խնթում եմ ինձ հետի խոնգ պիրես, վեր մոնիլաս ետը խոնգ ծխեն։ Ասում ա.— Լնվ, հիլիվեր, կպիրեմ։ Հիլիվերն ասում ա.— Իրեք ծով պիրտի ասկենաս, ամմա քու ծիտ շատ-շատ մընը անց կենա, էրկուաը կըրալու չի, ափսուզ ես, կմեռնես։ Կտրիչն ասում ա.— Հինչ օզում ա ինի, քալու եմ։ Հորը ծին մըն ծովն անց ա կենում։ Պաաված ա ինում, եր ա ինգում, ըստակում։ Կտրիչը մնում ա մտքամիլոր։ Նստում ա, լանց ինում լանց, քոն ինում։

Մովին միշին մըն հրեղեն ծի յա ինում, ձերան քուռեկենբրին

Դհհտ տուա ա կյամ ծովին ղրաղը ման կյա, քուռըկներան մընն ասուամ ա.—Վա՛յ, վա՛յ, մայրիկ, էս խեղճ աղաս ծի շօնի, հո՛ւնց ա ծովն անց կնալուս Մերն ասուամ ա.—Իմ յիհարս, մըն էլ ջիլավս հենե էն քարին տակին, թող եր կենա տոնս օնի, տինի իմ միշկիս, ըշտեղ օղի, կթոցնեմ, կտանեմ:

Կտրիլը ըրազումը ուրան հորն ա տեսնում, հերն ասուամ ա.—Վերթի, ծովի Զալալ ծին հետ ա կոխկիտ, եր կաց կոխկիտ մեծ քարին տական ընդա յիհար-ջիլավը տոնս կալ, տիր յիրան, ջիլավը ըռեխը քիցի, նստի, ըշտեղ օղես, կտանի հըսցնի:

Կտրիլը եր ա կենում, թհհնց էլ անում: Մովի Զալալ ծին եր-գյինթյ ա պիցրանում, քշանում, տամ, էրկու ծովը կտրում, անց կենում:

Կտրիլը հըսնում ա մըն քըղաքի: Մին թողում ա քըղաքին ղրաղին, յիհար-ջիլավը մին քարի տակ կյաղում, ինքը նի մըտ-նում քաղաքը: Քըղաքին միշին թաքավերին խաս բախնա յա ունում, բաղվանշին՝ մըն հիլիվեր մառթ, ասուամ ա.—Ա՛յ աղա, մշակութին կանե՞ս իմ բաղումս: Կտրիլն ասուամ ա.—Հա՛, կա-նեմ: Ասում ա.—Եկ, Կտրիլը քյոնում ա բաղվանշուն կոխկը: Ասում ա.—Ըշտղացի՞ ես: Ասում ա.—Ղարիբ եմ: Ասում ա.—Հո՞ր ես եկալ: Ասում ա.—Եկալ եմ հաթուն հանումին տանեմ: Ասում ա.—Հա՛, լավ ես ըրալ, հաթուն հանումը տարին մըն հետ կյամ ա մեր մեծ հըվուզումը լղանում, եթա տու կարաս ընդրա շորերը հնձանին ղրաղան եր օնես, քունն ա, եթա չէ, չէ՛. հինչ մարթ օզում ա մուտանա, էնքան սիպտակ ա ընդրա մորթին, իրեսը, վեր շա-փաղը յիմին աշկերըն օնում ա, հոնը տանում, եր քիցում, ըտա հետի էլ վեշ մընը կարում յի մուտանա: Բա հո՛ւնց անեմ,—ասում ա Կտրիլը: Հիլիվերն ասում ա.—Հընդստանա երգյիրումը սև վեղ կա, թա կարաս էն վեղան պիրես մըն պատառ աշկերտ քիցես, հաթուն հանումի շափաղը քեզ հոնշալ յի անիլ, ամմա Հնդստան աշխարը օխտը տարվա ճհհապա յա, դեղանը քյիննա, կհիլիվերես:

Կտրիլը տոնս ա կյամ քըղաքան, ծովի Զալալի յիհար-ջիլավը քարին տական տոնս օնում, թափ տամ, ծին կոխկին կաղնում ա, յիհարում ա, ջիլավը քյոնցում, նիհ ունում: Մին ասում ա.—Ըշտեղ տա՞նեմ քեզ, Կտրիլ: Կտրիլն ասում ա.—Հընդստանա սև վեղին տեղը գյոնդում ե՞ս:

Մին ասում ա.—Հա՛, գյոնդում եմ: Կտրիլն ասում ա.—Ինձ տար ընդեղ: Մըն աշկը ճպիրումը ծովի Զալալը Կտրիլին հըսը-նում ա Հընդստանա սև վեղը, Կտրիլը մըն հափուռ վեղ ա եր

օնում, մըն աշկը ճպիւղումն էլ ծովի Ջալալը ընդան հըսցնում ա խաս բաղը: Սին թնիլ ա անում, յիհարը եր օնում, շիլավը տնիւ օնում, տնում քարին տակին: Բաղվանշին ասում ա.—Պերի՛ր: Կտրիշն ասում ա.—Հա՛: Բաղվանշին ասում ա.—Հենե՛ հաթուն հանումը շորերը ավաղանին կոխկին հանալ ա, ինքը նի մըտալ հովուլը, լղանում ա, կարում ես, քիինն:

Կտրիշը սե վեղան աշկին ա քոնցում, քոնում: հաթուն հընումին շորերը եր ա օնում: հաթուն հանումն ասում ա.—Ա՛յ տղա, շորերս տու, կլենամ: Կտրիշն ասում ա.—Տալ շեմ: հաթուն հանումն ասում ա.—

Ա՛յ վըսկըքյաքյուլ տղա,
Աշխարհի բարաբար տղա,
Արևի հավասար տղա,
Շորերս տուր, կլենամ, տնիւ կլամ:

Կտրիշն ասում ա.—Տալ շեմ: հաթուն հանումն ասում ա.—Ա՛յ քաջ տղա, ես քունն եմ, տու իմը, դն շորերս տու, տնիւ կլամ, էսքան տարի յա քու ճընհապատ ի եշում, եկալ ես, տար:

Կտրիշը հաթուն հանումի շորերը տամ ա ոնրան, հաթուն հանումը շորերը կլենում ա, հովաղան տնիւ կլամ: Մըն հոնրումն լաղյ ա ինում, մըն կլեղեցկուհի: Կտրիշը ծովի Ջալալին յիհարում ա, նստում, հաթուն հանումին թարքլին տնիւում, բաղվանշուն մնաս պարի ասում, կլամ:

Սովերն անց ա կենում, հըսնում էն ծովին, ըշտեղ ոնրան ծին աստկալ էր: Վըսկունին թաղում ա: Նի են մըտում վերլի ծովը: Սովին մեշ տեղին հաթուն հանումի ախպերքը ածդահա ծովների յիրա կլամ են, վեր Կտրիշին ըսպանեն: հաթուն հանումն ասում ա.—Կտրիշ, քեզ իմ մտանիս, ծովը քիցի: Կտրիշը հաթուն հանումի մտանին ծովն ա քոնցում, ծովը շուրանում ա, վեղ տառնում, հաթուն հանումի ածդահա ախպերքն էլ քըրանում են: Տնիւ են կլամ, էն հիլիվերին տեսնում մեռած, թաղում են, յիրան խոնգ ծոխ անում, քոնում:

հաթուն հանումն ասում ա.—Ա՛յ տղա, տու ինձ քեզ հետի ե՞ս տանում, թա տրիշի հետի: Կտրիշն ասում ա.—Քեզ տանում եմ դեին հետի, վեր թողա քլինամ իմ հայրենիքը: Ախճիկն ասում ա.—Բա, էտ իլավ վեշ: Կտրիշն ասում ա.—Տու վախես վեշ, միևակ ասի ըշտեղ ա Դեին հոքին, հոքին ըսպանեն, քեզ տանեմ:

Հըսնում են դեին, հաթուն հանումին Կտրիշը տամ ա դեին, դեն ասում ա.—Ազադ ես, քլինն: Կտրիշը մըն տեղ թախ ա կե-

նում: Խաթուն Խանումը դեին ասում ա.—Դե, դեշանը ասես վեշ
 հոր ա քու հոքիտ, քեզ կնգոթուն շեմ ընիլու: Դե ասում ա.—Իմ
 հոքիս հեն ա մըն մըրալի փորում, վեր ամեն ըռավետ կյամ ա
 իխպիրան ճուր խմում: Խաթուն Խանումը Կտրիչին ասում ա: Ըռա-
 վետը Կտրիչը քյոնում ա իխպիրին զրադին կաղնում, վեր մարալը
 կյամ ա, ըսպանում ա, ընդա փորան դեին հոքին տոն օնում,
 քիցում կրակի մեշ, էրում: Դե Ըստակում ա: Ընդեղանը Խաթուն
 Խանումին եր ա օնում, կյամ: Կյամ ա ուրան հայրենիքը, տես-
 նում ուրան խորթ հերը մեռալ ա, ըրեսնուինը խորթ ախպերքն էլ
 ուրան մորը քիցալ են մըն պաղվալ, վեշ հաց են տամ, վեշ ճուր:
 Տամ ա պըղվալին տունը կտորում, տոն պոնում ուրան մորը:
 Խորթ ախպերքն էլ փախշում են օրիշ երգչիրնի: Կտրիչը տառ-
 նում ա թաքավեր, Խաթուն Խանումը՝ թաքուհի, մերն էլ թաքա-
 վերի մեր, ապրում են մինչևի մահի:

Ընդանք հասան ուրանց մուրադին, տուք էլ հմիք օնը մու-
 րադին:

